Երիտասարդ եւ անփորձ մայրերը յաճախ իրենց շրջապատին կարծիքը կ'առնեն այս կամ այն հարցին վերաբերեալ: Այդ հարցերէն ոմանք կրնան շատ սովորական թուիլ մեզի, բայց այդ մայրերը պէտք ունին փորձառուի մը կարծիքին:


Ո՞Ր ՏԱՐԻՔԻՆ ԿՐՆԱՆՔ ԿՏՐԵԼ ԵՐԵՒԱՅԻՆ ԵՂՈՒՆԳՆԵՐԸ

Մանկաբուժներուն կարծիքով, կարելի է մէկ ամուսնու երեխային եղունգները կտրել: Անշուշտ ասիկա վերջնական վճիռ մը չէ, բայց գիտենք, որ նորածինի մը եղունգները շատ կակուղ կ'ըլլան եւ կարիքը չկայ զանոնք մկրատին յանձնելու:



ձիւղ է, որ աւելի ուշ երեխան անպիտակցաբար երեսուր կը վիրաւորէ իր երկարած եղունգներուն պատճառով: Ոմանք երեխային ձեռքերուն «ձեռնոցներ» կ'անցընեն՝ այս անպատեհութեան առաջը առնելու համար: Բայց մանկաբուժներուն կարծիքով, ասիկա սխալ է, որովհետեւ այս ձեռքը երեխան կը զրկուի շօշափելու կարողութենէն:


ԽՈՒՆԳԻՆ ԼՈՒԿՆՈՎ ՊԱՂ ԱՊՈՒՐ



Բաղադրութիւն՝ 6 անձի համար
 ■ 12 մեծ եւ հասուն լոլիկ:
 ■ 3 գունդ մոցարելա պանիր:
 ■ 10-12 ռեհանի տերեւ:
 ■ 1 կիտրոն:
 ■ Ապուրի 1 դգալ քացախ:
 ■ Ապուրի 2 դգալ ձիթաիւղ:
 ■ Աղ, սեւ փոշի պղպեղ:
 Պատրաստութիւն:
 Լոլիկները 30 երկվայրկեան մխրճել եռացած ջրով մէջ, ապա պաղ ջրով լոլիկները կտրուել, իսկ անկէ ետք հարիչէ (միքսըր) անցընել կիտրոնի հիւթին, քացախին, ձիթաիւղին եւ մանրուած ռեհանին հետ: Ստացած խառնուրդը սառնարանը պահել առնուազն 2 ժամ:
 Մինչ այդ յատուկ դգալով մը մոցարելա պանիրը պղտիկ գնդիկներու վերածել:
 Հրամայելու պահուն լոլիկի ապուրը աղել, համեմել եւ 6 փոս ամաններու մէջ բաժնել, աւելցնել մոցարելայի գնդիկները եւ զարդարել ռեհանի տերեւներով:

ԱՌՈՂՋԱՊԱՇԱԿԱՆ

6 ՀՆԱՐ՝ ՇՈՒՆՁԻ ԳԱՐՇԱՀՈՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ



Գէշ հոտող շունչը միշտ ալ մաքրութեան պակասի արդիւնք չէ, անոր պատճառները այլազան են, բայց միշտ ալ միջոցը կայ շունչի գարշահոտութեան դէմ պայքարելու:

1.- Առտու կանուխ բաժակ մը ջուր խմեցէք կամ քանի մը կտոր անանաս ծծեցէք եւ կամ անանուխով շաքար մը ծծեցէք:

2.- Երբ ոգելից ըմպելի մը կը խմէք, հետը անպայման պատառ մը բան կերէք ալբոլին հոտը մասամբ չէ՛ գոքացնելու համար:

3.- Իւրաքանչիւր ճաշի ժամէ ետք ձեր ակունքները խոզանակեցէք եւ յատուկ թելով մաքրեցէք ձեր ակունքները, որպէսզի ուտելիքի մնացորդներ չտեղաւորուին անոնց միջեւ եւ գարշահոտութեան առիթ չտան:

4.- Սոխ, սխտոր ուտելէ ետք ակունքները խոզանակեցէք, սուրճի հատիկ մը կամ քանի մը տերեւ անանուխ ծամեցէք:

5.- Տարին անգամ մը ատամնաբուժին այցելեցէք, որպէսզի փտած ակունքներուն առաջը առնէ ու դարմանէ զանոնք:

6.- Եթէ գարշահոտութեան պատճառը ակունքներ չեն, կրնայ շնչառական գործարաններէն մէկուն բորբոքումը կամ սիւնիւզիթ մը գարշահոտութիւն պատճառել, հետեւաբար կ'արժէ դիմել ընտանիքի բժիշկին՝ պահուած հիւանդութիւն մը յայտնաբերելու համար:

ՆՈՐԱԶԵՒՈՒԹԵԱՆ ԱՃԵԱՐԸՆ

ԼԻԲԱՆԱՆՑԻ ԶԵՒԱԳԷՏ ԶԻԱՏ ՆԱՔՏԻ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ



Ըստ երեւոյթին, լիբանանցի ձեռագէտներուն յաջող երթը կը շարունակուի միջազգային նորաձեւութեան մարզին մէջ: Վերջերս Քան քաղաքի Մարթինէզ պանդոկին մէջ տեղի ունեցած է նորաձեւութեան աննախընթաց փառատուն մը, որուն ընթացքին լիբանանցի ձեռագէտ Ջիատ Նաքստ ցուցադրած է 2003-2004 աշուն - ձմեռ եղանակներուն յատուկ 22 գործեր:

Նաքստի ձեռած հագուստները ցուցադրած են միջազգային համբաւ վայելող բնորոշներ: Աւելին. նոյն փառատունին «քարթիէ» իր մասնակցութիւնը բերած է՝ ցուցադրելով յառաջիկայ եղանակի իր գոհարեղէնները, զորս կրած են բնորոշներ իրենց շքեղ հագուստներուն հետ:

Յառաջիկայ եղանակին համար «Քարթիէ» կ'առաջարկէ աղամանդեայ եւ մարգարտեայ զարդեղէններ՝ ձերմակ եւ դեղին ոսկիի ընկերակցութեամբ:

Ստորեւ տրուած նկարին վրայ կը տեսնենք նշանաւոր ձեռագէտը՝ իր յաջողմանը կրող բնորոշներուն կողքին:

Պատրաստե՛ ՅՈՒՇԻԿ ՄԱԻՍԱԳԱԼԵԱՆ

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՒՆԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
 «ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Տոքթ. Գեորգ Մարգարեանի մահուան առիթով, ԼՕՄԻ «Աշխէն» մասնաճիւղին եղած են հետեւեալ նուիրատուութիւնները:
Մաքրուիչ Պասմաճեան 10,000 լ.ո., Յասմիկ Գալայեան 10,000 լ.ո., Սօսի Էջօլեան 10,000 լ.ո., Վարսենիկ Ճանգրզեան 10,000 լ.ո., Նոյեմի Գալայեան 10,000 լ.ո., Սիրան Զահէկեան 10,000 լ.ո., Ազատ Խանգէթեան 10,000 լ.ո., ԱԳԻ Ղազարեան 10,000 լ.ո., Զնար Աստարճեան 10,000 լ.ո., ԱԳԻ Նարկիզեան 10,000 լ.ո., Մարալ Տէրտէրեան 10,000 լ.ո., Արմիկ Խաւնդեան 10,000 լ.ո., Զերմիկ Մուրատեան 10,000 լ.ո., Լուսին Խաչատուրեան 10,000 լ.ո., Սրբուհի Գազէզեան 10,000 լ.ո., Ալիս Մուրատեան 10,000 լ.ո., Լուսին Մկրտիչեան 10,000 լ.ո., Անահիտ Խորի 10,000 լ.ո., Ծուշան Մարտոյեան 10,000 լ.ո., Արտէմ Սիմոնեան 5,000 լ.ո., Մարկո Զուլամեան 5,000 լ.ո., Մայտա Սէմէրճեան 5,000 լ.ո., Հուրի Գուճաճեան 10,000 լ.ո.:



bezdig_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէլլուրի սակարանին մէջ օտար դրամացիներու փակման սակագիները հետեւեալներն էին երկը.
Սուրիական թղթուկի 28,80 - 29,00 լ.ո.
Քուէլթեան տինար 5120,00 - 5145,00 լ.ո.
Յորդանանեան տինար 2121,00 - 2131,00 լ.ո.
Պահրէյնեան տինար 3985,00 - 4010,00 լ.ո.
Ա. Ե. Եմիրուբեանց տիրիաւ 410,75 - 412,75 լ.ո.
Քաթարեան դիալ 413,75 - 415,75 լ.ո.
Սէրուական դիալ 402,00 - 404,00 լ.ո.
Օմանեան դիալ 3895,00 - 3920,00 լ.ո.
Եգիպտական կինէ 220,00 - 230,00 լ.ո.
Անգլիական սթերլին 2508,00 - 2518,00 լ.ո.
Չուիցերիական ֆրանք 1147,00 - 1152,00 լ.ո.
Թրքական լիրա 109,00 - 109,50 լ.ո.
Կիպրական փաունտ 3025,00 - 3050,00 լ.ո.
Ճապոնական հապար եէն 13,65 - 13,75 լ.ո.
Ամերիկեան տոլար 1501,00 - 1515,00 լ.ո.
Քանադական տոլար 1130,00 - 1135,00 լ.ո.
Աստրալիական տոլար 1038,00 - 1043,00 լ.ո.
Եւրօ 1778,00 - 1788,00 լ.ո.

● ՈՍԿԻ
Անգլիական մէկ ոսկի 145,000 - 150,000 լ.ո.
Իրանեան մէկ ոսկի 130,500 - 135,500 լ.ո.
Օսմանեան մէկ ոսկի 120,500 - 125,500 լ.ո.
ՄԵքսիկական փէսոս 693,000 - 713,000 լ.ո.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 18,070,000 - 18,270,000 լ.ո.
Մէկ օնս ոսկի 375,00 - 375,50 \$
Մէկ օնս արծաթ 4,83 - 4,85 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.
Եւրօ 1.1800 - 1.1805
Քանադական տոլար 1.3300 - 1.3305
Չուիցերիական ֆրանք 1.3127 - 1.3131
Ճապոնական եէն 109.58 - 109,61
Մէկ սթերլինգ 1.6645 - 1.6650

Մէկ պոլար 585 դրամ

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ
Գիճի Ա. ճշդում Գիճի Բ. ճշդում
Ա. կարգ 4,09 4,11
Բ. կարգ 4,55 4,58

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀՆՈ. 01-252852

ՕՐԱՏԵՏՐ

ԵՐԳԱՀԱՆԴԵՍ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ՓԱՍՏՈՐ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՃԷՁ ԵՒ ՊԼՈՒՉ ԵՐԳԱՈՐՃԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒՄԸ ԵՐԳԱՀԱՆԴԵՍ



Հիթըն Ռուիզ, Ռոզալանդա Վիթթո եւ Էնտրիւ «Ճիւնիթը Պոյ» ճոնգ

Ամերիկեան ճէզ եւ պրուզ երաժշտական սեռերը մեծ ժողովրդականութիւն կը վայելէին Լիբանանի մէջ եւ յաճախեցին զիջելու իրենց պատիւը Լիբանանի մէջ եւ յաճախեցին զիջելու իրենց պատիւը Լիբանանի մէջ եւ յաճախեցին զիջելու իրենց պատիւը Լիբանանի մէջ...
Ամերիկեան ճէզ եւ պրուզ երաժշտական սեռերը մեծ ժողովրդականութիւն կը վայելէին Լիբանանի մէջ եւ յաճախեցին զիջելու իրենց պատիւը Լիբանանի մէջ...
Ամերիկեան ճէզ եւ պրուզ երաժշտական սեռերը մեծ ժողովրդականութիւն կը վայելէին Լիբանանի մէջ եւ յաճախեցին զիջելու իրենց պատիւը Լիբանանի մէջ...

«ԱԶԳԱԿ»Ի ՄԷՁ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որել ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականն առնուազ օր մը առաջ, ՄԻՆՉԵՒ ԵՐԵՎԱՆԻ ՓԱՍՏՐ 5:00:
ՄԱՀԱԶԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահազ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՍԵՊՏԻՆ ԾԱՀՊԱԶԵԱՆԻ մահուան Բ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 12 Հոկտեմբեր 2003, Ս. Նշան Մայր եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԵԱՆԻ մահուան քառասունցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 12 Հոկտեմբեր 2003, Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԱՐԿՈՍԵԱՆԻ մահուան քառասունցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 12 Հոկտեմբեր 2003, Նոր Սիսի Ս. Սարգիս եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՍՈՒՐԵՆ ԶՈՐՃԻԿԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 12 Հոկտեմբեր 2003, Աճախիկայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՈՒԹԻ 5561 Պատրաստեց՝ Ս.Ս. ԱՂԱՋԱՐԵԱՆ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11
1
2
3
4
5
6
7
8
9
10
11
ՇՈՒՐԻՆՆԱԿԱՆ ՈՒՂԱՆԱՅԵԱՍ

- 1. Բարձր ուսումնարան - Ճոկան:
2. Երեկոյ ըսել - Եգիպտահայ օրաթերթ:
3. Օգտակար - Այրուբենէն:
4. Տառի մը անունը - Խորշիլ:
5. Որոշուած գին - Հայաստանի հնավայրերէն:
6. Համահարգ - Ստացական աճական:
7. Բարձրագոյն - Ս. Գրային նահապետ - Բաժին:
8. Գաւազան - Խեփոր:
9. Անառակ - Յրանսական քաղաք:
10. Սեմական աստուած - Սիրուն, ջնջուլ:
11. Այրուբենէն - Եշիլ Ըրմաբ գետի պատմական անունը:
1. Արշաւաստյր - Այրուբենէն:
2. Սեպ - Արամեացիներէ սերած ժողովուրդ (հակ.):
3. Չեռքի մաս - Սիպիլի ծննդավայրը:
4. Ուշ - Պարտեսակ:
5. Աստուածային:
6. Իգական օտար անուն - Համեմուած կերակուր:
7. Սերմնափակ - Կուլթ:
8. Աստուած՝ օտարացած - Որովհետեւ:
9. Սկառուտ - Արական անուն:
10. Վախճանգ Անանեանի երկերէն (երկու բառ):
11. Սեփականութիւն - Ստացական գերանուն - Պարգայ:

ԹԻՒ 5560
ԽԱՉԲԱՈՒՆ
ԼՈՒԾՈՒՄԸ
1 2 3 4 5 6 7 8 9 10 11
1
2
3
4
5
6
7
8
9
10
11

ՏԻՆՆԻ ԿՐԱՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ)
Ստիպողաբար պիտի տաք որոշում մը՝ առանց տեղեակ պահելու հարցին առնչուած անձերը: Անոնք պիտի շնորհաւորեն ձեզ այս օգտակար նախաձեռնութեան համար:
ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
Կը զգաք, թէ լքուած էք ձեր մերձակներէն: Անձամբ դուք պիտի տաք նոր որոշումներ՝ նոր գաղափարներով: Ինքնավստահ եղէք:
ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)
Եթէ ժամանակ ունիք, գացէք ու կատարեցէք բարեսիրական աշխատանք, կամաւոր կերպով: Ամէն մարդ կարիքը ունի բարեսիրութեան եւ սրտակցութեան: Օգնեցէք...
ԽՆՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
Դրամական հարց մը առեւտուրի ձեռով պիտի ստեղծուի: Փոխառութիւն մը կրնայ ըլլալ: Հաւ մտածեցէք, որովհետեւ առնելը աւելի լաւ է, քան՝ «վաղը կ'ունենաս» խոստումը:
ԱՌԻԻՄ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
Արտասահման ապրող ձեր բարեկամները պէտք ունին ձեր ներկայութեան՝ հանդիսաւոր առիթի մը համար: Այս կը նշանակէ աղուոր ճամբորդութիւն մը:
ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Ձեր խնայած գումարէն պիտի ծախսէք, եւ այս իրողութիւնը քիչ մը կը մտահոգ ձեզ: Հանգիստ մնացէք, որովհետեւ ասիկա միայն մէկ օրուան համար անցողակի հարց է:
ԿՇԻՌԻ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Ձեր ամուսնոյն, կնոջ կամ ընկերոջ ձեր մասին ունեցած կասկածները իր յորդ երեւակայութեան արդիւնքը չեն. աճ կը հսկէ ձեր բոլոր շարժումներուն: Եղէք լրջախոն եւ սիրալիր:
ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Եղէք կարգապահ եւ խոհեմ՝ դրամական թէ ընկերային մարգերու մէջ: Ձեր խոստումը յարգեցէք, կատարեցէք ձեր ընտանեկան թէ ընկերային պարտաւորութիւնները, որպէսզի յարգուիք:
ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Սիրահարած ըլլալ կը բուրի, որովհետեւ ձեր սիրտը կը բարձրի ի տես անձի մը: Եղէք տրամաբանող եւ խոհեմ: Բոլոր փայլող իրերը ոսկի մի կարծէք:
ԱՅՄԵՂՋԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Ձեր ստանձնած աշխատանքները պիտի չկարենաք իրագործել, անոնք երկար պիտի թուին: Ձեր կրնար աշխատիլ ճշուած մթնոլորտի մէջ: Գուրս ելէք ձեր վայրէջք:
ՄՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)
Ձեր համարձակիր ծառայութիւն մը խնդրել ձեր դրացիէն, մինչդեռ ան սիրով պիտի կատարէր ձեր խնդրանքը: Մեկուսացած մի՛ ապրիք, այլ եղէք ընկերակից:
ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)
Ուրիշին փոխ յրամ մի՛ տաք, շուտով պէտք պիտի ունենաք այդ գումարին: Խոհեմ՝ եղէք առեւտուրի եւ այլ կարգի յարաբերութեան ընթացքին:

ԱՅՍՈՐ

- Երգահանդէս՝ «Մոցարթ պայ մուլալթ», Լիբանանի Ազգային Օփերայի Ելոյթ, ժամը 20:00ից, «Սըրսոք» բանգարան:
- Երգահանդէս՝ Ելոյթ կ'ունենան «Հիթըն Ռուիզ» եռեակը, «Ռոզալանդա Վիթթո» քառեակը եւ «Էնտրիւ Ճիւնիթը պոյզ պենտ», խումբը, ժամը 20:30ից, «Ալ Մատինէ» թատերասրահ, մինչեւ 11 Հոկտեմբեր:
- Թատրոն՝ «Պիմբիգար Կոսո», ժամը 20:30ից, «Պէլլուր» թատերասրահ, մինչեւ 24 Հոկտեմբեր:
- Նկարչական ցուցահանդէս՝ Մարալ Տէր Պօղոսեանի գործերը, Կիլիկիոյ կաթողիկոսարանի «Կիլիկիա» սրահ, մինչեւ 10 Հոկտեմբեր:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Պիլոնկիկկ», Մոնա Ապի Հանգայի գործերը, «Տար էլ Մոնա» ցուցասրահ, մինչեւ 11 Հոկտեմբեր:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Ֆէյզըզ», Ֆլաւիա Քոստիի գործերը, «Էսփաս էս. Տէ.» ցուցասրահ, մինչեւ 18 Հոկտեմբեր:

ՕՂԵՆԻՈՅԹ
ՀԻՆԳՇԱԲԹԻ, 9 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003
ՊԷՅՐՈՒԹ ԱՄՊՈՏ
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՅԵՐԵՎ՝ 28°C
ԳԻՇԵՐ՝ 22°C
ԿՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 61%

ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ 9 Հոկտեմբեր 1953

ՀԱՅԵՐԷՆԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԸ ՄԷՁ



Ցեղ 12 Սեպտեմբերին Միլանոյի մէջ տեղի ունեցաւ միջազգային լեզուագիտական համագումար մը՝ նախաձեռնութեամբ փրոֆ. Փիլիպպի:
Այս առիթով ուսումնասիրութեան ընդհանուր լեզուաբանութեան հարցեր: Եղան նաեւ դասախօսութիւններ կարգ մը լեզուներու մասին: Հայերէնի մասին խօսեցաւ փրոֆեսոր Ֆէյզի, իտալերէնը զասախօսութեամբ մը, որուն նիւթն էր «Հայերէն բային կազմութիւնը եւ անոր փոփոխութիւնները պատմութեան տեսանկյունից»: Կային մտաւորապէս վաթսուց ուսուցիչներ մեծ մասով իտալացի: Օտարներուն կարգին կը գտնուէին փրոֆեսոր Լըռուա, Պրիւքսիլի համալսարանէն: Իտալիոյ մէջ հայագիտութեամբ կը զբաղին բանասիրական տեսակետով՝ փրոֆեսոր Մանուիլի, իսկ բաղդադական քերականութեան, մասնաւորապէս ձայնաբանական տեսակետով, ուսուցչապետներ Փիլիպպի, Պոլոնիէի եւ այլն:
Իտալական ձայնափնտրը այս ժողովին առիթով կարգ մը դասախօսութիւններ, որ քանի մը բառ արտասանելու լեզուներով, հայերէնը ներկայացուց փրոֆեսոր Ֆէյզի:

ԱՅՍՈՐ 9 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ
■ 1848 - Ծնունդ Սկրտիչ Փորթուգալեանի:
■ 1956 - Մահ կրթական գործիչ, գեղագետ եւ իմաստասեր Ծահան Պերպերեանի:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐԵՅ ԼՈՂԱՐՇԱԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՏՐԳ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ



Երիտասարդության եւ մարմնակրթության նախարար Սեպուհ Յովնանեան երէկ ժուճիէի «Սպայից ակումբ»-ին մէջ բացուել կատարեց լողարշաի (սուլուսի) Արաբական Տրգ ակումբի նուրբեան: Ան կը ներկայացնէր նախագահ ԿՕՐ Էմիլ Լահուտը:

Ախոյեանութեան մրցումներուն իրենց մասնակցութիւնը կը բերեն Եգիպտոս, Ալճերիա, Թունուզ, Յորդանան, Սուրիա եւ Լիբանան:

Միւս կողմէ, նախարարութեան իր կեդրոնատեղիին մէջ, նախարար Յովնանեան երէկ ընդունեց Լիբանանի լողարշաի ֆետերասիոնի նախագահ Չարեհ Ամատունին, որուն կ'ընկերակցէին լողարշաի միջազգային ֆետերասիոնի նախագահ Աշիլ Ֆերեթ, միջազգային ֆետերասիոնի անդամ Ֆրանսին Կոժոն եւ լողարշաի արաբական ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար Սիմոն Խուրի:

Պատուիրակութիւնը շնորհակալութիւն յայտնեց նախարար Յովնանեանի՝ մրցաշարքը 7էն 10 Հոկտեմբերին Լիբանանի մէջ հիւրընկալելուն համար:

ԼՈՒՐԵՐ՝ ԸԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԵՆ

Նոյեմբեր 26էն Դեկտեմբեր 1, Գանիոյ մարտաքաղաք Քոփէն-հակընի մէջ տեղի պիտի ունենայ կոփամարտի միջազգային մրցաշարք մը, որուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն նաեւ հայրենի կոփամարտիկներ:

Այս մրցաշարքը ձեւով մը պատրաստութիւն պիտի ըլլայ Փետրուար 18էն Մարտ 1 Փուլա քաղաքին մէջ (Խրուսթիա) տեղի ունենալիք Եւրոպայի ախոյեանութեան, որուն ընթացքին չորս ոսկի մետալ շահող մարտիկները իրաւունք պիտի ստանան մասնակցելու 2004ի Աթէնքի Ողիմպիականի մրցումներուն:

• <ԱՅԱՍՏԱՆԻ ըմբշամարտի ֆետերասիոնը յայտնեց, որ յառաջիկայ Նոյեմբեր 10էն 12 Երեւանի Տինաս մարզադահլիճի մէջ տեղի պիտի ունենայ Ստեփան Սարգսեանի անուան ազատ ոճի ըմբշամարտի 8րդ միջազգային մրցաշարքը, որուն ցարդ իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Ռուսիա, Իրան եւ Վրաստան: Կ'ակնկալուի, որ մինչեւ շաբաթավերջ մասնակցող երկիրներուն թիւը հասնի 12ի:

Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերող ըմբշները պիտի մասնակցին եօթ դասակարգի մրցումներու (50 քկ. 60, 66, 74, 84, 96 եւ 120):

• <ԱՅԱՍՏԱՆԻ ճատրակի լաւագոյն վարպետներէն Լեւոն Արոնեան, որ վերջերս հաստատուեցաւ Գերմանիա, այսուհետեւ միջազգային մրցումներուն իր մասնակցութիւնը պիտի բերէ միայն Գերմանիոյ ճատրակի ֆետերասիոնին հովանաւորութեան տակ:

• ԵՌՒ. Է. ԷՏ. Ա. Ն երէկ յայտնեց, թէ Շաբաթ, 11 Հոկտեմբերին, Երեւանի մէջ տեղի ունենալիք Հայաստան - Սպանիա Եւրո - 2004ի վտուսի մրցաշարքին, օրուան իրաւարարը պիտի ըլլայ հանրածանօթ Ուրս Մալբըրը (Չուիլցերիա):


Մրցումին ակնարկելով, Հայաստանի ֆութբոլի ֆետերասիոնը յայտնեց, թէ տոմսակներուն գինը բացառաբար սղած է: Արեւելեան եւ արեւմտեան թրիպիւններուն տոմսակները պիտի վաճառուին չորս հազար դրամի (նախապէս՝ երեք հազար դրամ), իսկ հիւսիսային եւ հարաւային թրիպիւններուն տոմսակները՝ երկու հազար դրամի (նախապէս՝ հազար հինգ հարիւր դրամ):



Ուրս Մալբըր

ՎԻԼԸՆԵՕՎ ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ՊԻՏԻ ՎԱՐԷ ՊԱՐԻ ԻՆՔՆԱՇԱՐԺԸ

Մէկ անգամ Ֆորմիլա 1ի աշխարհի ախոյեան հանդիսացած քանատացի ժաբ Վիլլընթօվ յառաջիկայ կիրակի վերջին անգամ ըլլալով պիտի վարէ ՊԱՐԻ ինքնաշարժը, նկատի ունենալով որ յառաջիկայ եղանակին, ան պիտի փոխարինուի ճափոնցի Թաքուս Մաթթոյով (26 տարեկան):



Սաթօ

32 տարեկան Վիլլընթօվ, այս եղանակին բաւական ձախող եղանակ մը բոլորեց: Ան 15 կրան փրիներէն կրցած է հաւաքել միայն վեց կէտ եւ այժմ կը գրաւէ վարորդներու ընդհանուր դասաւորման 16րդ դիրքը:

Նշեմք, թէ 2003 եղանակի վերջին կրան փրին տեղի պիտի ունենայ Սուլուքայի մէջ (Ճափոն), առաւօտեան ժամը 8:30ին:

ՄԱԹԵՐԱԶԻ ԿԸ ԴԻՄԷ ԻՆՔՆԱՔՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ

Ինքեր Միլանի յետասպահ Մարքօ Մաթերապի, երէկ իր կատարած մէկ յայտարարութեան ընթացքին ըսաւ, թէ ինչ ալ ըլլան պայմանները, խումբին արձանագրած ձախող դիւնքներուն գլխաւոր պատասխանատուն են մարտիկները, նկատի ունենալով որ վերջին երեք մրցումներէն ինքեր կրցած է միայն երկու կէտ հաւաքել:



Զուլբըր

Յաջորդական երկու ձեռնակ հաւասարութիւններ արձանագրելէ ետք, ինքեր, անցեալ շաբաթավերջին Միլանօ քաղաքի տերապիին ընթացքին 3-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց Ա.Սէ. Միլանէն:

30 տարեկան Մաթերապի, որ վերադարձ ըլլալով բացակայեցաւ տերապի այդ մրցումէն, ըսաւ, որ արձանագրեցի մարտիկ չեթթոր Քուլբըր երբեք ալ այլանալի չէ այդ մէկուն համար, թէ եւ ակումբին նախագահը՝ Մասիմօ Մորաթթի վզուշացուց Քուլբըրը, որ յառաջիկայ մրցումներու ընթացքին շարունակեց այդ ընթացքը:

Ան եզրափակեց ըսելով, որ այժմ ապաքինած ըլլալով ան պատրաստ է իր մասնակցութիւնը բերելու ինքերի կատարելիք յաջորդ մրցումին, որ տեղի պիտի ունենայ Պրեշիայի դաշտին վրայ:

• ԻՆՔԵՐ ՄԻԼԱՆԻ նախկին մարտիկ՝ պրապիցի Ռոնալտօ տարբեր կարծիք ունէր սակայն:

Իտալական «Կապթթա Տելլօ Սփոր» օրաթերթին հետ իր կատարած հարցազրոյցին ընթացքին պրապիցին ըսաւ, որ այդ ձախող արդիւնքներուն համար ռեւէ մէկը պէտք չէ այլանալ, բացի Քուլբըրէն:

1997էն 2002 ինքերի մաս կազմած Ռոնալտօ նոյնիսկ Քուլբըրի հետ հարցեր ունենալով, լքեց իր ակումբը եւ միացաւ Ռեալ Մատրիտի:


Այժմ առիթը յարմար նկատելով, ան սկսաւ քննադատութիւններ տեղացնել իր նախկին մարտիկին վրայ, սակայն միեւնոյն ժամանակ ալ սիրաշահելով իր նախկին ակումբին համակիրները, ըսելով, որ անէն անգամ, որ ինքեր կը պարտուի, ինք մեծապէս կը տխրի, որովհետեւ ինք միշտ ալ կը մնայ ինքերի համակիր մը:

ԱԿԱՍԻ ԱՄՈԼԸ ԲԱՆՏԱԻՈՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ ԶԱԽԱԿՈՎ ՄԸ

Ամերիկացի թենիսիստ Անտոն Ակասի եւ գերմանացի նախկին թենիսիստ Երեմի Կրաֆ բախտաւորուեցան երկրորդ պատկով մը՝ ձեյ: Անոնց առաջին պատկը ձեյլըն ժիլ, տղայ է:

SUPORԻՆԱԿ ՎԱՃԱՌԸ...

Մանչեսթըրը Եունայթըտի նախկին մարտիկ ձորճ Պէսթի 1968ին շահած Եւրոպայի լաւագոյն ֆութբոլիստի տիտղոսին գինը երէկ վաճառուեցաւ 167 հազար փանտի (շուրջ՝ 280 հազար ամերիկեան տոլար):



ձորճ Պէսթ

57 տարեկան Պէսթ կ'ըսէ, թէ իր այդ տիտղոսը ծախելով, կ'ուզէ Յունաստանի մէջ արձակուրդի տուն մը գնել...

ՄՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔ

Սպանիոյ ֆութբոլի բաժակի մրցաշարքին 1-64րդ հանգրուանի մրցումներուն, Ռեալ Մատրիտ եւ Պարսելոնա իրենց Բ. դասակարգի մրցակիցներուն դաշտերուն վրայ յաղթանակներ արձանագրելով ապահովեցին 1-32րդ հանգրուանին իրենց տոմսը:

Ռեալ Մատրիտ 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Սան Սեպսթիան Տր Լոս Ռեյէսը, շնորհիւ՝ Ռաուլ Կոնչալիսի, Խաիէ Փորթիլոյի եւ Էսթեպան Բամպիստի կողմէն, մինչ Պարսելոնա 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Կրամանէթը, շնորհիւ՝ Ռոնալտիւնիոյ նշանակած կոլին (մրցումին աւարտէն երեք վայրկեան առաջ):

Տեփորթիօ Քորուսա, իր կարգին 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Քոմպոսթելան (Գ. դասակարգ), շնորհիւ՝ Տիեկօ Թրիսթանի նշանակած կոլին (մրցումին աւարտէն ութ վայրկեան առաջ), սակայն Լա Քորուսա այդ մրցումին զոյն տուաւ իր համակիրներէն մէկը՝ Մանուէլ Ռիոս Սուարէսը (31 տարեկան), որ Սանթիակօ Քոմպոսթելա հիւանդանոցը հապի հասած ունեցաւ սրտի կաթում մը: Սուարէս, որ հայր է երկու պատկներու, կը փորձէր իրարմէ անջատել երկու կազմերուն համակիրներուն միջեւ տեղի ունեցած կռիւ մը:

Ականատեսներու համաձայն, Քոմպոսթելայի համակիրները, բաւական մը ծեծած են Սուարէսը: Վիրաւորուած են նաեւ ութ համակիրներ:

Սպանիոյ ֆութբոլի ֆետերասիոնը այժմ քննութիւն բազած է, այս հարցին շուրջ:



Ոստիկանութիւնը կը փորձէ իրարմէ բաժնել Քոմպոսթելայի եւ Տեփորթիօ Քորուսայի համակիրները

Մասնագիտութիւնդ ՈՍԿԷ ԱՊԱՐԱՆ ԶԱԴ Է ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷՃ
դիմացդ կը բանայ

Ա. Նամակարգիչ ԼԵԶՈՒՆԵՐՈՒ եւ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ մասնագիտութիւնը, ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ:

Բ. Ոսկերչութեան ու կաղապարաշինութեան վարպետ ըլլալու համար, տարիներ եւ շատ ճիգ է պէտք:

ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷՃ ամենակարճ ճամբան է այդ նպատակին հասնելու, առաւել՝ վկայեալ վարպետ ըլլալու համար:

Արձանագրութիւն՝ ամէն օր

ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷՃ - Տորա՝ հեռ. 01/251320

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աֆիլի իրարօգնութեան սնտուկը ուրախ է յայտարարելու, թէ 2003-2004 տարեշրջանին համար պիտի շարունակէ նախորդ տարի հաստատած աշակերտական ֆոնտը:

Աֆիլի աշակերտական ֆոնտէն կրնան օգտուիլ նախակրթարանի եւ միջնակարգի բոլոր հայ աշակերտները, որոնք կը յաճախեն հայկական վարժարան:

Դիմումները կարելի է ստանալ Աֆիլիի գրասենեակէն, «Արին» շէնք, Դ. յարկ, Հոկտեմբեր 14էն 18, 2003:

Աֆիլի իբրեւ իրարօգնութեան սնտուկ միշտ ալ պատրաստ եղած է առողջապահական եւ կրթական մակարդակներու վրայ իր նպաստը բերելու:

Շնորհակալութիւն բոլոր իր անդամներուն, որոնք առաջին օրէն սեցուկ կանգնեցան եւ հաւատարմեան անոր առաքելութեան:

ԱՅՇԻԼ

ՊԱՂԵՍՏԻՆՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԿԸ ՀԵՐՔԵՆ, ԹԵ ԱՐԱՖԱԹ ԱՐՏԻ ՏԱԳՆԱՊ ԱՆՑՈՒՑԱԾ Է

ՌԱՄԱԼԼԱ, 8 (ԱՅՓ).- Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆատի խորհրդատուները հերքեցին այն լուրերը, ըստ որոնց՝ պաղեստինցի ղեկավարը արտի տագնապ մը անցուցած է անցեալ շաբաթ:




Թայէպ Ապտէյնահիմ անհիմն որակեց «Տը Կարտիրըն» օրաթերթի հրատարակած լուրը: Ապտէյնահիմ ըսաւ, որ քանի մը օրէ ի վեր Արաֆատը անհանգստութիւն մը անցուցած է: Ան շեշտեց, որ Արաֆատը առողջ է եւ բնական ու սովորական բաժնով կ'աշխատի:

ՔՈՐԵՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՅ ԱՊԱՀՆՎԵԼ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ԿԱԵՐԱՑՈՒՄԸ

Պաղեստինցի վարչապետ Ահմէտ Քորէյ յայտարարեց, որ կրնայ աշխատիլ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի հետ եւ պինդոր մը հաստատել: Քորէյ ըսաւ նաեւ, որ խորհրդարանին պիտի ներկայացնէ արտակարգ դաշինքի նախարարները՝ ապահովելու համար անհրաժեշտ վաւերացումը:

Սախարարներէն՝ Սասէր Եուսուֆ մերժած էր սահմանադրական երդումը տալ՝ խորհրդարանին վաւերացումը ապահովելէ առաջ: Յետոյ չէ, թէ խորհրդարանին հակադարձութիւնը ինչ պիտի ըլլայ Քորէյի կառավարութեան հանդէպ, որ նշանակուած էր Եսսէր Արաֆատի կողմէ հրատարակուած հրամանագիրով մը: Երեսփոխան մը դիտել տուաւ, որ օրէնքը թէեւ կ'արտօնէ ստիպողական վիճակի դրութեան հաստատումը, սակայն ոչ՝ ստիպողական վիճակի կառավարութիւն մը: Երեսփոխանը աւելցուց, որ տագնապի մը լուծում ապահովելը օրէնքի շրջանցումով ու խախտումով չի կատարուիր:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ AIKI ARGENTI (ԱՅԵՐ ԱՐԾԵՆԹԻ)



Նոր անուն մըն է արծաթեայ գոհարեղէնի եւ ժամացոյցներու աշխարհին մէջ՝ Պէյրութի կեդրոնական շուկային Ապտէլ Համիտ Քարամէ փողոցին վրայ: Նորածնութեան աշխարհին հետ քայլ պահող իր եզակի ռճով դարձած է առաջնահերթ արծաթեայ գոհարեղէնի մարզին մէջ: Վաճառատունը աչքառու է իր ֆուշիա գոյնով եւ 70ակաճները յիշեցնող տեքորով:

ԹԵՐԱԿԱՆ ՈՒԺԵՐ ԻՐԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ՄԵԾ ԱՂՏՈՒԿ ԿԸ ԲԱՐՁՐԱՅՆԵ ԻՐԱՔԻ ՄԵՋ

Մինչ Միացեալ Նահանգներ կ'ողջունեն իրաք պիտուր ուղարկելու թուրքիոյ որոշումը, Իրաքի իշխող խորհուրդն ու ժողովուրդը կը մերժեն՝ անընդունելի նկատելով Անգարայի որոշումը: Թրքական ուժեր ուղարկելու որոշումին գծով մտահոգութիւններ յայտնեցին նաեւ թուրքեր, քիւրտեր եւ այլ երկիրներ:

Իշխող խորհուրդը մտահոգ է, որ թրքական ուժերուն ժամանումը պիտի ունենայ գերիշխանութեան վերադարձը իրաքցիներուն: Խորհուրդի անդամ Սասէր Չատրըժի ըսաւ, որ այս գծով պաշտօնական յայտարարութիւն մը պիտի հրատարակուի: Չատրըժի աւելցուց, որ իրաքցիները դէմ են որեւէ երկրէն ուժերու ժամանման, ոչ թէ միայն թրքական ուժերուն դէմ: Ըստ Չատրըժիի, Իրաք չ'ուզեր վնասել իրաքցիներուն հետ կապերուն:

Խորհուրդի այլ անդամ մը Մահմուտ Օսման ըսաւ, որ առժամեայ կառավարութիւնը միաձայնութեամբ դէմ արտայայտուեցաւ թրքական որոշումին:

Թրքական ուժեր իրաքեան հողերու վրայ դնելու որոշումը ցոյց կու տայ, թէ իրաքեան տկար է իշխող խորհուրդը Ուաշինկթընի դիմաց, որ կը պարտադրէ որոշումները: Ուաշինկթըն մեծ աշխատանք տարած է համոզելու համար Անգարան, որ Իրաք ուժ ուղարկէ՝ անտեսելով Իրաքի եւ Թուրքիոյ միջեւ տարիներու վրայ երկարած լարուածութիւնը, յատկապէս քիւրտ-թուրք կապերուն գեղատիւ վրայ: Ուրիշներ հարց կու տան, որ թրքական ուժերը ինչպէ՞ս պիտի կարենան ապահովութիւնը երաշխաւորել, երբ աներկեան ուժեր իրենց գերարդիական պէնքերով ամիսներէ ի վեր չեն յաջողած ամրապնդել ապահովութիւնը եւ կարգն ու կանոնը վերահաստատել:

ՈՒԱՇԻՆԿՊԵՆ ԿՈՂՋՈՒՆԵ ԱՆԿԱՐԱՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Միացեալ Նահանգներ ողջունեցին Թուրքիոյ խորհրդարանին կէցածքը, որ վաւերացուցած էր կառավարութեան առաջարկը:

Սպիտակ Տունն ու արտաքին գործոց նախարարութիւնը առանձին յայտարարութիւններով գոհունակութիւն յայտնեցին՝ անտեսելով Իրաքի իշխող խորհուրդին ընդդիմութիւնը: Սպիտակ Տան բանբերը ըսաւ, որ Ուաշինկթըն կ'ողջունէ որոշումը եւ թէ թուրք պաշտօնատարներու հետ պիտի գործակցի ծրագրին մանրամասնութիւնները ճշդելու համար:

Արտաքին գործոց նախարարութեան բանբերը իր կարգին ըսաւ, որ Ուաշինկթընի համոզումով՝ թրքական ուժերը պիտի նպաստեն Իրաքի կայունութեան: Արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը հեռագրով նային հաղորդակցութիւն մը ունեցաւ իր թուրք պաշտօնակիցին՝ Ապտիլլա Կիլիլի հետ, ըսելու համար, թէ Ուաշինկթըն կը գնահատէ Անգարայի կէցումը օրն ու րոյնը:

Պաշտպանութեան նախարար Տոնըյտ Ռամսֆելտ յայտնեց, որ գոհ է ու յարգանքներով տեսնում: Ան աւելցուց, որ յարգանքները երբեք չ'ունեն, թէ կարգ մը երկիրներ յանձնարու են օգնելու:

Ամէն մարդ սակայն չի բաժնէր ամերիկացի պաշտօնատարներուն խանդավառութիւնը:

Պոլսով մէջ, ցուցարարներ իրենց մարմինները շղթաներով ամերիկեան դպրոցի մը ցանկապատին միացուցին, իբրեւ բողոք թուրք պիտուրներ Իրաք առաքելու որոշումին դէմ: Ցուցարարները կը բացագանչէին, թէ պիտի չարտօնեն իրենց պիտուրներուն սպանութիւնը Իրաքի մէջ: Ոստիկանութիւնը ձերբակալեց վեց ցուցարարներ: Երկու այլ ցոյցեր կապակերպուեցան Պոլսոյ գլխաւոր հրապարակներուն վրայ:

Թուրքիոյ աւանդական թշնամիներէն Տունաստանն այլ դժգոհ է: Կառավարութեան բանբերը յայտնեց, որ թրքական ուժերուն Իրաք առաքումով պարզապէս աւելի բարդ կացութիւն մը պիտի ստեղծուի: Բանբերը պահանջեց, որ Իրաքի մէջ իշխանութիւնը շուտով անձնուի ՄԱԿի:

Իրաքի թէ Թուրքիոյ մէջ ապրող քիւրտներն այլ մտահոգ են Անգարայի որոշումով: Թուրքիոյ քրտական գլխաւոր կուսակցութիւնը մտահոգութիւն յայտնեց, որ այսպիսի որոշում մը կրնայ պատերազմի մը դռները հասցնել Թուրքիան:

Իրաքցի քիւրտները եւ շիիները իրենց կարգին պզուցացուցին, որ թրքական ուժերուն ժամանումով յաւելեալ խռովութիւններ պիտի հրահրուին Իրաքի մէջ, ուր ժողովուրդը պիտի հակադրուի, որովհետեւ կը մերժէ թուրք պիտուրներուն ներկայութիւնը: Քիւրտ պաշտօնատար մը ըսաւ, որ թուրքերը պիտի գործեն մասնատրապէս քիւրտներուն եւ ընդանրապէս Իրաքի դէմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ Հիի իրաքցիներ բողոքի ցոյցի մը մասնակցեցան Պաղեստինի մէջ՝ ամերիկացիներէն պահանջելով ապատ արձակումը երկու կրօնատրոսներու, որոնք ձերբակալուած են քանի մը օր առաջ: Ցուցարարները, որոնք բողոքեցին նաեւ թուրք պիտուրներուն գործուղման դէմ, բողոքի հաւաքը ունեցան ամերիկեան իշխանութիւններուն կեդրոնատեղիին դիմաց:


ՔԱԶԱՅԻ ԿԸ ՄՊԱՌՆԱՅ ՎՏԱՐԵԼ ԻՏԱԼԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄԻՍՐԱԹԱ, 8 (ԱՅՓ).- Լիպիոյ ղեկավար Մուամմար Քադաֆի սպառնաց վտարել իտալական ընկերութիւնները, եթէ Հռոմ հատուցում չտայ ափրիկեան երկրի 32 տարի գաղութատիրական իշխանութեան տակ պահելուն համար:

Քադաֆի ըսաւ, որ Իտալիա պիտի կորսնցնէ Լիպիոյ մէջ իր բոլոր շահերը, եթէ շարունակէ անտեսել Թրիփոլիի պահանջները:

Հռոմ եւ Թրիփոլի 1998ին ստորագրած էին համաձայնագիր մը, որուն մէջ Իտալիա պաշտօնապէս ներողութիւն խնդրեց Լիպիոյ ժողովուրդէն գաղութատիրութեան ժամանակաշրջանին (1911էն Բ. Աշխարհամարտ) հասցուցած վնասներուն համար:

ՔԻՄԻԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՊԵԼԵԱՆ ՄՐՅԱՆԱԿՆԵՐԸ՝ 3 ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐՈՒ ԵՒ ԲՐԻՏԱՆԱՅԻ ՄԸ



ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ մրցանակակիրները

ՍԹՈՔՈՒՄ, 8 (ԱՅՓ).- Ամերիկացի երկու կենսաքիմիագետներ Չորեքշաբթի օր դարձան քիմիագիտութեան Նոպելեան 2003ի մրցանակակիր, բջիջային մաշկերու գծով իրենց աշխատանքին համար:

Փիթըր Ակրի (54 տարեկան) եւ Ռոտրիք Մքինըն (47 տարեկան) ցոյց տուած են, թէ շուրջ ինչպէս կ'անցնի բջիջային մաշկերու ընդմէջէն եւ բջիջներ ինչպէս կը հաղորդակցին իրարու հետ:

Անոնց աշխատանքը, ըստ Նոպելեան մրցանակներու դատական կազմին, պիտի օժանդակէ յաղթահարելու կարգ մը հիւանդութիւններ, որոնք կը հարուածեն յատկապէս երիկամները, սիրտը, մկանները եւ ջրային դրութիւնը:

Գիտութեան մարպիտ մէջ Նոպելեան մրցանակները ընդհանրապէս կը տրուին երէց գիտնականներու, որոնք իրենց մրցանակին արժանացած հետազոտութիւններուն ձեռնարկած են տասնամեակներ առաջ:

Սակայն Ակրի եւ Մքինըն երիտասարդ են եւ անոնց հետազոտութիւնը նոր է, ինչ որ կ'արտացոլացնէ մոլեքիւլներու կենսաքիմիայի հետազոտութեան հետադարձ թափ ստացող կարեւորութիւնը:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՍԱՐՁԻՆ ՄԵՋ

Միւս կողմէ, Նոպելեան մրցանակներու դատական կազմը Չորեքշաբթի օր յայտարարած է տնտեսագիտութեան մարպի մրցանակատրոսներուն անունները:

Ամերիկացի Ռոպըրթ Էնկլը եւ բրիտանացի Քլայվ Կրէյնըրը ստացած են մրցանակը, որովհետեւ անոնք շատ բարելաւուած միջոցներ տուած են՝ որոշ ժամանակամիջոցի մը տնտեսական վիճակագրութիւններ վերլուծելու համար:

Ակրիի եւ Մքինընի նման, Էնկլը եւ Կրէյնըրը պիտի բաժնեկցին 10 միլիոն քրոնոր (1,11 միլիոն եւրօ) գումար մը:

ԱՅՂԱՆԻՍՏԱՆԻ ՄԵՋ ԲԱԽՈՒՄՆԵՐ

Հիւսիսային Աֆղանիստանի մէջ պիտեալ բախումներ արձանագրուեցան երէկ՝ տեղւոյն պիտեալ խմբակցութիւններու միջեւ, որոնց հետեւանքով արձանագրուեցան շուրջ 50 կոտորելու վիրատուներ: Խմբակցութիւններէն մէկը կը ղեկավարէ Աթա Մոհամմէտ (տաճիկ), միւրը՝ պաշտպանութեան փոխ նախարար Ապտուլ Ռաշիտ Տոսթամ (ուզպէք):

ՉԵԶԵՆԻՈՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵԾ ԴԺԳՈՀՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՆ ՆԱԵՒ ՌՈՒՄԻՈՅ ՄԵՋ

Ռուսական մարդկային իրաւանց խմբակ մը՝ Մոսկուայի Հէյսիսի խմբակը, երէկ դատապարտած է Չէչէնիոյ մէջ շարքաւորուած իր զինուորներէն ունեցած նախագահական ընտրութիւնները, պատժելով «ամօթի ընտրութիւններ» կոչելով: Անկախ նաեւ լուսարձակի տակ առած է ընտրական կեդրոններու մէջ արձանագրուած բազմաթիւ վեղձարարութիւնները: Խմբակին նախագահը՝ Լուսիլիա Ալեքսեան, մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտնած է, որ Երեքշաբթի օր յայտարարուած 87,7 առ հարիւր մանակցութեան համեմատութիւնը «անկարելի է», յայտնաբերելով «անկարելի է», յայտնաբերելով «անկարելի է», յայտնաբերելով «անկարելի է»: